

ՍԵՅ ՆՈՐ ԳԻՒՂ, 13 Հոկտեմբեր 1913

Հայ զիրերու զիւտին և տպագրութեան հաստատման կրկնակ Յորելեաւ-նական հանդէսը տանելու համար շարաթ մը առաջ կաղմուեցաւ Յորելեաւ-կան Յանձնաժողով մը, որ հանդէսը պէտք եղած չուքով կատարելու համար աննախընթաց պատրաստութիւններ տեսաւ յաղթական կամար մը շնել տուաւ եկեղեցին և զպրոցին փողոցին զլուխը, ճիշտ շուկային կեղրոնք, ուր զետեղուեցան օրուան Յորելեաններուն ի արգանա վերտառութիւն կրող թուղթեր և մասնաւորապէս պատրաստուած լոթով արձանապրութիւններ, եկեղեցին և զպրոցին դուռերը զափնիներով և օրուան յատուկ վերտառութիւն կրող զրօշակներով և Օսմ. զրօշակներով զարդարուեցան Այս պատրաստութիւնները տեսնելով տեղույս Ազգատախնամ ընկերութիւնն ալ եկեղեցիին բակին մէջ իր սենեկակին առջեւ շնել տուաւ զափնեղարդ կամար մը զոր վերտառութիւններով և զրօշներով զարդարեց Արարատեան Բնիկերութիւնն ալ իր կարգին զրօշադարձեց իր ընթերցարանին առջեւ, շուկային մէջ գեղեցիկ տեսարան մը պարզելով։

Այս պատրաստութիւնները ըլլալէն վերջը Յորելեանական Յանձնաժողովը այս տողերը զրողին պաշտօն յանձնեց երեկ յանուն զիւտին ժողովուրդին հեռագիրով շնորհաւորել «Ժամանակ» լրապիցին խմբագրութիւնը այս զրական ու տպագրական տօնին առթիւ, և իրիկունը բաւական մէծ բաց նութեան հետ Արարատեան Ընթերցարանին մէջ տրուած նուազանանգէսին ներկայ եղաւ։

Այսօր առաւտուն եկեղեցիին մէջ հանդիսաւոր պատարագ մասուցուելով հոգենանդիստ կատարուեցաւ Ս. թարգմանիչներուն և տպագրիչներուն յիշատակին. և ժամը 12/ին (լ. Ե. Ե.) եկեղեցիին մէջ զրական հանդէս մը կատարուեցաւ ի ներկայութեան խուռն բազմութեան Այս հանդէսին մէջ արտասանութիւններ ու ճառեր խօսեցան զպրոցական երկուու աշակերտներ, ուսուցիչներէն Սերովիք Պետրոսեան, Անանիա Պօյաճեան, Արգիս Պօղոսեան, Արման Զաքարեան հետզնետէ խօսեցան օրուան տօնին, զիրին զրականութեան ու տպագրութեան վրայ. Տօքթ. Սազգեան էֆ ալ թելադրական բանախոսութիւնն. մը ըրաւ զիւղին երիտասարդութեան, երգերու վարիչ Պ. Աղնիւ Պըզգրճեան «Հով արէքառ երգեց իրը մններգ։

Հանդէսին յայտագրին պարունակութիւն, լմինուուն պէս յանձնաժողովին կողմէ Արշաւ էֆ. Համամանեան պարզեց հանդէսին նպատակը և զիւղին մէջ հանգանակութիւն բացուած ըլլալը հոչակեց. այս յայտարարութեան վրայ նուիրատուութիւնը մկաս տեղույս երեւելի վաճառականներէն Մարգար էֆ. Շարապիսանեանի երկու ուսկի նուէրովը ու ժողովուրդին կողմէ ընդունեցաւ ամփահարութեամբ, և անոր յաջորդեցին տեղույս երեւելիներուն կողմէ մէկական ոսկի և մէջ մէկ մ. ճիթ նուիրատուութիւններ, այնպէս որ եկեղեցիին ներսը ու զուրսը նուիրատուութեանց գումարը կէս ժամուան մէջ հասաւ 10 սմ. ոսկի, որ կը յուսանք թէ զեռ շարունակուելով պիտի կրկնապատկուի ու եռապատկուի։

Հանդէսին վերջ թափոր մը կազմուեցաւ որուն առջեւէն կ'երթալին Ա. Բ. Գ. տառերը աճրողջութեամբ իրենց կուրծքին կարմիր թուղթներուն վրայ կրող տասներկու փոքրիկ աղջիկներ. այս թափորը երգով ուղղուեցաւ զէպի ընթերցարան ուր նուազախումբի մը կողմէ զիմաւորուեցաւ, թափորին մասնակցող ձերեւելիները ու կառավարական պաշտօնեաները՝ որոնք հանդէսին ալ ներկայ էին մասնաւոր հրաւերով. պատուասիրուեցան, հոսնափէին միւտիրը մախրի պէյ կարճ բանախօսութեամբ մը շնորհաւորեց օրուան տօնախսմութիւնը և կատարուած յորելեանին ի յարգանս բաժակ պարպեց որուն պատասխանեց բազմութիւնը ծափահարութիւններով որմէ վերջը ընթերցարանին պարտէզին մէջ նուազախումբի և զպրոցական աշակերտներու կողմէ հայկական երգեր երգուելով հանդիսութիւնները մինչեւ իրիկուն շարունակուեցան։

ՍԱՐԳԻՍ ՊՕՂԱԾՍԵԱՆ